ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.1
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 19.02.2018թ. ԹԻՎ 128-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

21 փետրվարի 2018թ.,
ժամը 15:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝
Ա. Աբգարյան ԳԿՎ պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Ա. Գրիգորյան Տրանսպորտի բաժնի պետ
Հ. Մխիթարյան Տրանսպորտի բաժնի-մեխանիկ վարորդ

Հանձնաժողովի բացող անդամներ՝
Ա. Աղվանյան Տրանսպորտի բաժնի դիսպետչեր
Ա. Մարտիրոսյան Տրանսպորտի բաժնի մեխանիկ-վարորդ

Հանձնաժողովի քարտուղար
Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

Օրակարգ՝

1. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/18>> ծածկագրով դիզելային վառելիքի ձեռքբերման գնման ընթացակարգի վերաբերյալ <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ ներկայացված հարցման քննարկում

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/18>> ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել է պարզաբանում-հարցում: Գնահատող հանձնաժողովին հասցեագրված նամակում <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ընկերությունը հարցնում է. <<...թե արդյոք հնարավորություն ունի գնային առաջարկ ներկայացնել միայն 2018 թվականի առաջին եռամսյակի համար..>>: Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց, որ <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ10/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.2 կետի համաձայն. <<*Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են* ***գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան***>>:

Այնուհետև հանձնաժողովը քննարկեց և միաձայն որոշեց.

1. Հաստատել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/18>> ծածկագրով դիզելային վառելիքի գնման ընթացակարգի վերաբերյալ <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ տրամադրվող պարզաբանման տեքստը,
2. Հանձնաժողովի քարտուղարին՝ օրենքով սահմանված կարգով հրապարակել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/18>> ծածկագրով դիզելային վառելիքի ձեռքբերման

գնման ընթացակարգի վերաբերյալ <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ տրամադրվող պարզաբանման տեքստը:

Ա. Աբգարյան Հանձնաժողովի նախագահ

Ա. Գրիգորյան Հանձնաժողովի անդամ

Հ. Մխիթարյան Հանձնաժողովի անդամ

Ա. Աղվանյան Հանձնաժողովի անդամ

Ա. Մարտիրոսյան Հանձնաժողովի անդամ

Գ. Սարգսյան Հանձնաժողովի քարտուղար